

Գ. ԴԻՄԻԵՐՈՎ

ՅԱՇԻՍԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ
Ա. Բ. Ա. Զ.

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿԻՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՐ

31 JAN 2018

Գ. ԴԻՄԻՏՐՈՎ

ՓԱՇԻՍՏԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ
ԱՌԱՋ

ՑԵՂՐԱՎԻՃԱԿԱՆ ԲԱռ՝ ՊՐԵՍԱԿԱՆ
ԼԱՅՎԵԴԻԳԻ ԴԱՏԱՎԻՃԱՐԵՐԵՐԸ,
1933 թվի դեկտեմբերի 16-ին

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Յերեք տարի առաջ, 1933 թվի դեկտեմբերի 16-ին Լայպ-
շլդում՝ Փաշխատական գատարանում հնչեց հակաֆաշխտական
պահքարի տրիբունի, պրոլետարական հեղափոխության հերո-
սական մարտիկի՝ ընկեր Գեորգի Դիմիտրովի բոլշևիկյան ճառը:

Ռայխստագի հրկիզման գրանդիոզ պրովոկացիան, վորը կո-
մունիզմի զեմ «խաչակրաց արշավանք» կազմակերպելու աղդա-
նշան պիտի ծառայեր, ձախողվեց: Լայպցիգում յերեք ամիս
ձգձգվող գատարառության պրոցեսը ցույց տվեց ամբողջ աշ-
խարհին, վոր ռայխստագի իսկական հրկիզմները վոչ թե կո-
մունիստներն են, այլ Գերմանիայի Փաշխտական կառավարիչ-
ները: Ֆաշիզմի և կոմունիզմի միջև լայպցիգում տեղի ունե-
ցող մենամարտը վերջացավ կոմունիզմի հաղթանակով: Հար-
վածը, վորը նախորոշված եր հասցնել կոմունիզմին, ջախջախիչ
ուժով իջավ գերմանական Փաշիզմի դպին:

Կոմունիզմն այդ մենամարտը շահեց գատարանում ընկեր Դիմիտրովի ունեցած վարքագծի չնորհիվ: Զնայած սպառնալիք-
ներին, հալածանքին, ահարեկումներին, Փիզիկական ու բարո-
յական տանջումներին՝ նայիտնալ-սոցիալիստներին չհաջողվեց
ընկեր Դիմիտրովի արիությունը: Նա բացահայտորեն
նետեց Փաշխտական գաղանացած պարագաների յերեսին, վոր
«պատմության անիվը պտտվում է, առաջ և շարժվում դեպի
խորհրդային Յեվրոպայի կողմը, դեպի խորհրդային հանրապե-
տությունների համաշխարհային միության կողմը»:

Յեվ այդ անիվը, վոր առաջ և մղում պրոլետարիատը՝ Կոմու-
նիստական Խնտերնացիոնալի դեկավարությամբ, չի հաջողվի
կանգնեցնել՝ վո'չ բնաշնչող միջոցառումներով, վո'չ տաժանակիր
աշխատանիքի դատապարտող դատավիճուներով, վո'չ մահապա-
տիժներով: Այդ անիվը պտտվում է և կպտտվի մինչև կոմունիզմի
վերջնական հաղթանակը»:



11-28680 գր

Г. ДИМИТРОВ
ПЕРЕД ФАШИСТСКИМ
СУДИЛИЩЕМ

Армпартиздат, Ереван, 1937

Ընկեր Դիմիտրովի վարքադիմը դատարանում ընդհանուր Հիսուսացմունք առաջացրեց։ Դեռ յերբեք այնպիսի բռժեղ կամպանիա չեր յեղել, քան այն, վորը ծավալվեց ընկեր Դիմիտրովին գերմանական Փաշիզմի ճիրաններից ապատելու համար։ Ընկեր Դիմիտրովին ազատելու համար մղվող կամպանիան ազատագրական շարժման պատմության մեջ դարձակետ հանդիսացալ, սկզբ զնելով Փաշիզմի դեմ պայքարելու միասնական պրոլետարական ճակատի ատեղծմանը։

Այն որը, յերբ ընկեր Դիմիտրովը Փաշիստական բանտից Խորհուրդների յերկիրը յեկավ, «Պրաւա»-ն դրեց։

«Անսասան բոլշևիկի, Դիմիտրովի անունը բոլոր յերկիններում պրոլետարական մասսաների կովի սիմբոլը դարձալ։ Յուրաքանչյուր հարված, վոր Դիմիտրովը հասցնում եր Փաշիստական կեղեքիչներին, բարձրածայն արձագանքով չնչում եր ամբողջ աշխարհում։ Նրա ոեսլիկների խարազանող խոսքերը, վոր մերկացնում եյին նողկալի դատական կոմեդիայի ամբողջ մեխանիզմը, վոր քայլ առ քայլ պատում եյին դատավորների և նրանց տերերի դիմակները, լավ հայտնի յեն բոլոր յերկիրների բանվորներին։ Դիմիտրովի կողմից Փաշիստական դիկտուտուրային հասցրած վերքերի սպիները մինչև այժմ չեն առողջացել։ Յեվ վերջապես, Դիմիտրովի վոչնչացնող նառը դատարանում քրի պես կրցու և սուր եր, —դրանում են կովի մարտակոչը՝ ուղղված գերմանական պրոլետարիներին և բոլոր յերկիրների պրոլետարներին։ Դիմիտրովն արեց այն, ինչ նրա վրա յերդի եր դաստիարակը. մեղադրյալից նա մեղադրող դարձավ, դատապարտյալի արքուր նա հեղափոխական ամբիոնի վերածեց, վորտեղից նա ամբողջ աշխարհի առաջ վեր բարձրացրեց Կոմունիստական ինտերնացիոնալի դրոշը, Լենինի Ստալինի դրոշը։»

Ֆաշիստական դաշիճների ձեռքերից խլված ընկեր Դիմիտրովը Կոմունիստական ինտերնացիոնալի ՄԱԿ կոնդրեսում տված գեկուցման մեջ ծավալեց Փաշիզմի դեմ կովելու ծրագիրը՝ ժողովրդական ճակատի հիման վրա։ Այդ ծրագրի հիմնական տարրերը դրվագն են յեղել դատարանում արտասպնած պատմական ճառում։

Ֆաշիզմի դեմ դեռ շատ մարտեր ունենաք մղելու առաջիկայում։ Գերմանական Փաշիզմը յերկիրը յերկիրը զորանոցի և համակենտր-

բոնացման ճամբարի յեւ վերածել, նա նոր, իմպերիալիստական սպանդ է պատրաստում։ Գերմանական ու խոալական Փաշիզմը ինտերվենցիա յեւ ծավալում իսպանիայում, ախուելով այնտեղ մահ և ալերածություն։

Ֆաշիզմի դեմ կովելու, դեմոկրատիան ու խաղաղությունը պաշտպանելու համար՝ միլիոնավոր հակաֆաշիստական մարտիկներ են վոտքի յելնում։

Այս որերին հրատապ ու քաղաքականապես ակտուալ են ընկեր Դիմիտրովի՝ Կոմունիստական ինտերնացիոնալի դեկավարի ճառը։

ԵՆԿ. ԴԻՄԻՏՐՈՎԻ ՀԱՐԵ
ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՌԱՋ

ԴԻՄԻՑՐՈՎ. — Դատավարական որենսդրքի 258 պարագրա-
ֆի հիման վրա յետ իրավունք ունեմ խոսելու թե վորպես դատա-
պաշտպան և թե վորպես մեղադրյալ:

ՆԱԽԱԳԱՀ .—Դուք վերջին խոսքի իրավունք ունեք . այդ
խոսքը Ձեզ վերապահվում է :

ԴԻՄԻՏՐՈՎ. — Այդ որենսդրքին հիման վրա յես իրավունք ունեմ բանալիձել դատախազության հետ, իսկ հետո արդեն անզնել վերջին խոռքին:

Պարոնայք գատառվորներ, պարոնայք մեղադրողներ, պարոնայք գատառվաշտպաններ, զեռևս այս գատառալարության սկզբին, յերեք ամիս առաջ, յես վորպես մեղադրյալ նամակով դիմեցի գատարանի նախագահին։ Այդ նամակում յես գրել եյի, թե ցավում եմ, վոր իմ յելույթներն ընդհարումների հասցրին։ Սակայն յես վճռականորեն առարկում եյի այն բանի դեմ, վոր իմ վարքագիծը մեկնաբանմի վորպես հարցեր տալու և հայտարարություններ անհերու իրավունքի կանխամտածված չարարկություն՝ պլրուագանդայի նպատակով։ Հասկանալի յե, թե քանի վոր յես լինելով անպարա՞ մեղադրյալ եմ յեղել, յես ձգտում եմ պաշտպանմիլ իմ տրամադրության տակ ունեցած բոլոր միջոցներով։

«Յես խոստովանում եմ, —դրել եյի յես, —լոր վորոշ հարցեր ժամանակին լինելու և ձեր տեսակետից՝ յես վոչ միշտ հիշտ եյի գնում։ Սակայն այդ միայն նրանով ե բացատրվում, վոր յես գերմանական իրավունքի հետ ծանոթ չեմ։ Բացի դրանից այսպիսի դատական պրոցեսում յես իմ կյանքում առաջին անգամ եմ մասնակցում։ Յեթե յես իմ ընտրությամբ դատապահ ունենայի, յես իմ սեփական պաշտպանության համար

անպայման կարող կլինելի խուսափել նման անբարենպաստ միջաղեղերից : Յես մի շարք փաստաբաններ անլանեցի . Դեչնվա , Մորո-Զիաֆերի , Կամալինկի , Տորբես , Գրիգորով , Լեռ Գալախեր (Ամերիկա) և դր Լեման (Սաարբրյուկենից) : Բայց կայսերական դատարանն այս կամ այն պատրվակով իմ բոլոր առաջարկությունները մեկը մյուսի հետեւ մերժեց : Յես վորեն պերսոնալ անվատահություն չեմ տածում քաղաքացի դր Տեյխերտի նկատմամբ վորպես անձնավորության և փաստաբանի : Բայց Գերմանիայում տիրող՝ իրերի այժմյան դրության պայմաններում յես չեմ կարող Տեյխերտին պաշտոնական դատապաշտպանի դերում անհրաժեշտ վատահություն տածել : Այդ պատճառով յես փորձում եմ ինքս ինձ պաշտպանել , ընդլորում յերեմն յես , անպայման , իրավաբանական տեսակետից սխալ քայլել եմ կատարում :

Դատարանի առաջ ինձ պաշտպանելու շահերից յելնելով և , դրծում եմ , նույնպես և դատավարության նորմալ ընթացքի շահերից յելնելով , յես մի անդամ ևս և վերջին անգամ — Գերադույն դատարանին եմ դիմում , խնդրելով , վորպեսզի նա փաստաբան Մարսել Վիլարին , վորն այժմ լիազորություն ե ստացել իմ քրոջից , թույլտվություն տա մասնակցելու իմ պաշտպանությանը : Յեթե այդ իմ վերջին առաջարկը , ցավոք սրտի , նույնպես մերժի , ապա ուրիշ վոչինչ չի մնում , քան պաշտպանի ինքս ինձ իմ ուժերի և կարողությունների չափով » :

Նրանից հետո , յերբ այդ առաջարկին ել մերժվեց , յես վորոշեցի ինքս ինձ պաշտպանել : Կարիք չունենալով իմ վղին փաթաթած դատապաշտպանի պերճախոսության վոչ մեղրին , վոչ թույնին , յես ամբողջ ժամանակ պաշտպանում եյի ինձ առանց փաստաբանի ողնության :

Միանդամայն պարզ է , վոր յես վոչ մի կողմից ինձ կապված չեմ դգում դր Տեյխերտի պաշտպանողական ճառի հետ : Իմ պաշտպանության գործում նշանակություն ունի միայն այն , ինչ վոր յես ինքս մինչեւ այժմ ասել եմ դատարանի առաջ , և այն , ինչ վոր հիմա պիտի ասեմ : Իմ կուսակցական ընկեր Տորգլերին յես չեյի ուղենա վիրավորել — իմ կարծիքով , նրան արդեն իր պաշտպանը բավական անարդեց — բայց յես պարտավոր եմ ուղղակի ասել . յես գերադասում եմ իմ անմեղ դրությամբ գերժանական դատարանի կողմից դատավարութած լինել մահվան ,

քան թե արդարացման հասնել այնպիսի պաշտպանության չնորդ հիվ , վորով դր Զակը հանդես յեկալ հոգուտ Տորգլերի : Նևին ԱԳԱՀ . (Ընդհատում ե Դիմիտրովին) Զեր գործը չեղաղլել այսուեղ քննադատությամբ :

ԴիՄԻՏՐՈՎ . — Յես ընդունում եմ , վոր յես խոսում եմ սուր և դաժան լեղվով , իսկ իմ պայքարը ու իմ կյանքը նույնպես յեղել են սուր և դաժան : Բայց իմ լեզուն շիտակ և անկեղծ լեզու յե : Յես սովորություն ունեմ իրերն իրենց անունով անվանել : Յես վաստաբան չեմ , վորն այստեղ ըստ պարտականության ե պաշտպանում իր պաշտպանյալին :

Յես պաշտպանում եմ ինքս ինձ՝ վրբու մեղադրյալ կոմունիստ :

Յես պաշտպանում եմ իմ սեփական կոմունիստական հեղափոխական պատիվը :

Յես պաշտպանում եմ իմ դադավարները , իմ կոմունիստական համոզմունքները :

Յես պաշտպանում եմ իմ կյանքի իմաստն ու բովանդակությունը :

Այդ պատճառով դատարանի առաջ իմ արտասանած յուրաքանչյուր խոսքը՝ այդ , այսպես ասած , իմ միան ու արյունն ե : Յուրաքանչյուր խոսքը իմ խորագույն վրդովմունքի արտահայտությունն ե անիրավացի մեղադրման դեմ , այն փատի դեմ , վոր այսպիսի հակակոմունիստական վոճրագործությունը վերադրյում ե կոմունիստներին :

Ինձ հաճախ կշտամբում եին , վոր յես գերմանական գլուխություն դատարանի համար մարդկան լուրջ վերաբերմունք չունեմ : Դա բացարձակապես անիրավացի յե :

Ճիշտ ե , վոր ինձ համար , իբրև կոմունիստի , բարձրագույն որենի հանդիսանում ե կոմունիստական ինտերնացիոնալի ծրագիրը , բարձրագույն դատարան՝ կոմունիստական ինտերնացիոնալի վերահսկիչ հանձնաժողովը :

Բայց ինձ համար , վորպես մեղադրյալ՝ Գերադույն դատարանը ինտուպանցիա յե , վորի հանդեպ պետք ե վերաբերմունքով լրջությունը մոչ միայն այն պատճառով , վոր նա հատուկ վորպակավորում ունեցող դատավորներից ե կազմված , այլ նաև այն պատճառով , վոր այդ դատարանը պետական իշխանության խիստ կարեոր մարմին ե , տիրապետող հասարակակարգի կարեոր մարմին ե , ինստանցիա , վորը կարող ե վերջնա-

կան կերպով դատապարտել պատժի առավելագույն չափին։ Յետ
կարող եմ հանդիսան խղճով ասել, վոր դատարանի առաջ և հետ
և տեսապես նաև հասարակայնության առաջ, բոլոր հարցերի վերա-
բերյալ միայն ճշմարտությունն եմ ասել։ Ինչ վերաբերում է
իմ կուսակցությանը, վորն անլեզալ դրության մեջ ե դանում,
ազա նրա մասին վորեն ցուցմունք տալուց յետ հրաժարվել եմ։
Յետ միշտ խոսել եմ լուրջ և համոզմումքի խորագույն զգաց-
մունքով։

ՆԱԽԱԳԱՀ. — Յետ չեմ հանդուրժի, վոր դուք այսուեղ, այս
դահլիճում կոմունիստական պրոպագանդայով զբաղվեք։ Դուք
այդ կատարում եյթ ամբողջ ժամանակ։ Յեթե դուք պետք ե
այդ վորով ել շարունակեք, յետ ձեզ խոսքից կզրկեմ։

ԳԻՄԻՏՐՈՎ. — Յետ պետք ե վճռականապես առարկեմ այն
պնդումի դեմ, վոր յետ պրոպագանդայի նպաստակներ եմ հետա-
պնդել։ Կարելի յե կարծել, վոր իմ պաշտպանությունը դատա-
րանի առաջ վորոշ պրոպագանդիստական աղղեցություն ե ունե-
ցել։ Բնդունում եմ, վոր իմ վարքագիծը դատարանի առաջ կա-
րող ե նույնպես ծառայել որինակ մեղադրյալ կոմունիստի հա-
մար։ Բայց իմ պաշտպանության նպաստակն այդ չի յեղել։ Իմ
նպաստակն այն ե յեղել, վորպեսզի հերքեմ այն մեղադրանքը,
վոր իբր թե Դիմիտրովը, Տորգելը, Պոլտվն ու Տանելը, Դեր-
մանիայի կոմունիստական կուսակցությունը և կոմունիստական
ինտերնացիոնալլ հրդեհի հետ վորեն առնչություն ունեն։

Յետ գիտեմ, վոր ույխստագի հրկիզման մեջ մեր կարծե-
ցյալ մասնակցությանը Բուլղարիայում վոչ վոք չի հայտնում։
Յետ գիտեմ, վոր ընդհանրապես արտասահմանում հաղիս թե
մեկը դրան հալատում ե։ Բայց Գերմանիայում ուրիշ պայմաններ
են, այսուղ այսպիսի տարրորինակ պնդումներին կարող են հա-
վատալ։ Այդ պատճառով յետ ցանկանում եյթ ապացուցել, վոր
կոմկուսակցությունը չի ունեցել և չունի վոչ մի մասնակցու-
թյուն այդպիսի վոճագործության մեջ։

Յեթե խոսելու լինենք պրոպագանդայի մասին, ազա այսուղ
տեղի ունեցած շատ յելույթներ այդպիսի բնույթ եյին կրում։
Դերբելսի ե Գյորինդի յելույթները նույնպես անուղղակի պրո-
պագանդիստական աղղեցություն գործեցին հոգում կոմունիզմի,
բայց վոչ վոք չի կարող նրանց պատասխանառու դարձնել այն
բանի համար, վոր նրանց յելույթները նման պրոպագանդիստա-
կան աղղեցություն ունեցան։ (Դակիմում շարժում կ ծիծաղ)։

Մամուլն ինձ վոչ միայն ամեն կերպ անվանաբարկում եր—այդ
ինձ համար միւնուույն ե—բայց իմ հարցի կալակցությամբ բուլ-
ղարական ժողովրդին «վայրենի» և «բարբարոսական» եյին ան-
վանում։ Ինձ «բալկանական մութ սուրեկտու»՝ «վայրենի բուլ-
ղարացի» եյին անվանում, և յետ դյա կողքով լուսությամբ չեմ
կարող անցնել։

Ճիշտ ե, վոր բուլղարական ֆաշիզմը վայրենի և բարբարոս
։ Բայց բուլղարական բանվոր դասակարգն ու դյուղացիությու-
նը, բուլղարական ժողովրդական ինտելիգենցիան յերբեք ել վայ-
րենիներ և բարբարոսներ չեն։ Նյութական կուլտուրայի մակար-
դակը Բալկաններում, անպայման, այնպես բարձր չե, ինչպես
մյուս յելուսպական յերկիրներում, բայց հողեակես և քաղաքա-
կանապես մեր ժողովրդական մասսաներն ակելի ցածր մակար-
դակի վրա չեն կանգնած, քան Յելուսպայի մյուս յերկիր-
ների մասսաները։ Մեր քաղաքական պայքարը, մեր քաղաքական
ձգուումները Բուլղարիայում ցածր չեն, քան մյուս յերկիրնե-
րում։ Ժողովուրդը, վորը 500 տարի ոտարերկրյա լծի տակ ե
ապրել չի որդյունելով իր լեզուն ու աղդությունը, մեր բանվոր
դասակարգն ու դյուղացիությունը, վորոնք պայքարել են և
պայքարում են բուլղարական Փաշիզմի դեմ և կոմունիզմի հա-
մար։ Այդպիսի ժողովուրդը բարբարոսական և վայրենի չե։
Բուլղարիայում վայրենիներն ու բարբարոսները—այդ միայն
Փաշիտուներն են։ Բայց յետ պարոն նախազահ, ձեզ եմ հարց-
նում։ Փաշիտուները վո՞ր յերկրում բարբարոսներ և վայրենիներ
չեն։

ՆԱԽԱԳԱՀ. — (Ընդհատում ե Դիմիտրովին) Դուք հո չե՞ք
ակնարկում քաղաքական հարաբերությունները Գերմանիայում։

ԳԻՄԻՏՐՈՎ. — (Հեղինական ժպիտով) Իհարկե վոչ, պարոն
նախազահ . . .

Այս ժամանակից դեռ շատ առաջ, յերբ գերմանական կարէ
Կայսրն ասում եր, վոր նա միայն իր ձիու հետ և գերմանե-
րն խոսում, իսկ գերմանական աղնականներն ու կրթված
մարդիկ միայն լատիներեն եյին դրում և ամաչում եյին գերմա-
ներն լեզվից, «բարբարոսական» Բուլղարիայում։ Կիրիլն ու
Մեֆոդին ստեղծում և տարածում եյին հին բուլղարական մա-
տենագրությունը։

Բուլղարական ժողովուրդը բոլոր ուժով և ամբողջ համա-
ռաթյամբ կովում եր ոտարերկրյա լծի դեմ։ Այդ պատճառով

յես բողոքում եմ բուլղարական ժողովրդի վերաբերմամբ յեղած հարձակումների գեմ։ Յես վոչ մի հիմք չունեմ ամաշելու այն բանից, վոր յես բուլղարացի յեմ։ Յես հպարտանում եմ նրանով, վոր յես բուլղարական բանվոր դաստիարակի զավակն եմ։

Նախքան հիմնական հարցի վրա կանգ տանելը յես պետք է մատանանշեմ հետեւյալը։ Դր Տեյխերտը մեղ կշտամբեց, վոր մենք ինքներս մեղ մեղադրյալի դրության մեջ դրինք ռայխոտակը հրկիղելու մեջ։ Դրան յես պետք է պատասխանեմ, վոր մարտի Զից, այն ե՛ մեղ ձերբակալելու որից, մինչեւ այս դատավարության սկզբը շատ ժամանակ է անցել։ Այդ ժամանակամիջոցում կարելի յեր հետաքննել կասկածանք առաջացնող բոլոր մոմենտները։ Նախնական քննության ժամանակ յեռ ռայխոտագի հրկիղման մասին խոսեցի՝ այսպես կոչված հրդեհի հանձնաժողովի պատասխանատու պաշտոնյաների հետ։ Այդ պաշտոնյաներն ինձ ասացին, վոր ռայխոտագի հրկիղման մեջ բուլղարները մեղավոր չեն։ Մեղ մեղադրեցին միայն, վոր մենք ուրիշի անցարդում ենք ապրել՝ ուրիշների անվան տակ, ապրել ենք առանց դրանցվելու և այլն։

ՆԱԽԱԳԱՀ. —Ան, ինչի մասին դուք այժմ խոսում եք, դատավարության ժամանակ չեւ քննվել. այդ պատճառով դուք իրավունք չունեք այսուղի մասին խոսելու։

ԴԻՄԻՏՐՈՎ. —Պարոն նախագահ, այդ ժամանակամիջոցում պետք եր ստուգել բոլոր տոյլաները, մեղ իր ժամանակին այդ մեղադրամից աղատելու համար։ Մեղադրական ակտում նշվում ե, վոր Դիմիտրովը, Պոլովը և Տանելը հաստատում են, վոր իրենք բուլղարական եմիգրանտներ են. սակայն, չնայած դրան, պետք է ապացուցված համարել, վոր նրանք Դերմանիայում աղբում ելին անեղաղաղ աշխատանքի նպատակով։ Նրանք—սակաւ մեղադրական ակտում—հանդիսանում են «Մոսկայի կոմունիստական կուսակցության լիազորները՝ զինված ապստամբություն նախապատրաստելու համար»։

Մեղադրական ակտի 83-րդ եջում ասվում է, վոր թե՛ Դիմիտրովը հայտնել ե, վոր փետրվարի 25-ից—28-ը ինքը Բեռլինում չի յեղել, սակայն այդ չի փոխում գործի դրությունը և նրան, Դիմիտրովին չի աղատում ռայխոտագի հրկիղման մասնակց լինելու մեղադրանքից։ Այդ յերեսում ե—ժամանակվում է այնուհետև մեղադրական ակտում, վոչ միայն Դերմերի ցուցունքից ուրիշի վարձական ակտում, վոր այդ ցուցագործ փորձը պետք է կոչ, աղղանշան լիներ պետության թշնամիների համար, վորոնք դրանից հետո ցանկանում ելին գլխավոր հարձակում գործել գերմանական պետության վրա՝ նրան վոչնչացնելու համար և նրա փոխարեն, III ինտերնացացիո-

ՆԱԽԱԳԱՀ. —Դուք այսուղի չպետք ե սկսեք կարդալ ամբողջ մեղադրական ակտը. այդ մեզ բավականաչափ ծանոթ ե։

ԴԻՄԻՏՐՈՎ. —Յես պետք է ասեմ, վոր յերեք քառորդն այն ամենի, ինչ այսուեղ՝ դատարանում ասացին դատախազն ու պաշտպանները, վաղուց բուրյին հայտնի յե, բայց նրանք այսուեղ այդ բանը նորից կրկնեցին։ (Դակիինում շարժում և ծիծաղ)։ Գելմերը ցուցմունք տվեց, վոր Դիմիտրովն ու Վանդեր Լյուբբեն յեղել են Բայերնհոֆի ուստորանում։ Այնուհետև մեղադրական ակտում յես կարդում եմ։ «Յեթե Դիմիտրովը հանցագործության վայրության բոնված ել չի յեղել, աստ նա այնուամենայնիվ մասնակցություն և ունեցել ուայխսատադը հրկիղելու նախապատրաստմանը։ Նա Մյունիսեն է մեկնել, աղանձովելու համար իրեն այլուրեքությամբ (ուրիշ տեղ լինելով)։ Դիմիտրովի մոտ գտնված բոռյուրներն ապացուցում են, վոր նա մասնակցել է Գերմանիայի կոմունիստական շարժմանը»։

Այսպես է հիմնավորված այդ վաղահաս մեղադրանքը, վորն որպակաս դուրս յեկայի։

ՆԱԽԱԳԱՀ. — (Ընդհատում է Դիմիտրովին) Դուք մեղադրության նկատմամբ այդպիսի արտահայտություններ չունետք և գործածեք։

ԴԻՄԻՏՐՈՎ. —Յես ուրիշ արտահայտություն կընտրեմ։

ՆԱԽԱԳԱՀ. —Բայց վոչ այդքան անթույլատընկի։

ԴԻՄԻΤՐՈՎ. —Յես վերադառնում եմ մեղադրման մեջոներին և մեղադրման ակտին այլ կապակցությամբ։

Այս գատավարության բնույթը նախորչված եր այն թեղիսով, վոր ռայխոտագի հրկիղությունը Գերմանիայի կոմունիստական կուսակցության, նույնիսկ համաշխարհային կոմունիզմի ձեռքի գործն է։ Այդ հակակոմունիստական ակտը՝ ռայխոտագի հրկիղությունը՝ վերադրված եր կոմունիստական համարված եր վորուս կոմունիստական ապստամբության աղջանշան, վորպես գերմանական սահմանադրությունը փոփոխելու աղջանշան։ Այդ թեղիսի ոգնությամբ ամբողջ դատավարությանը տրված եր հակառակունիստական բնույթ։ Մեղադրական ակտում ասվում է. «Մեղադրությունը կանոնած է այն տեսակետի վրա, վոր այդ հանցագործ փորձը պետք է կոչ, աղղանշան լիներ պետության թշնամիների համար, վորոնք դրանից հետո ցանկանում ելին գլխավոր հարձակում գործել գերմանական պետության վրա՝ նրան վոչնչացնելու համար և նրա փոխարեն, III ինտերնացացիո-

նալի վողորմածությամբ, պրոլետարիատի դիկտատուրա, խոր-
հըրդային իշխանություն հաստատելու համար . . .»:

Պարոն դատավորներ, առաջին անգամ չե, վոր նման հան-
ցափորձ է վերագրվում կոմունիստներին: Յես չեմ կարող մեջ
բերել այստեղ այդ տեսակի բոլոր որդինականները: Յես հիշեցնում
եմ այտեղ, Գերմանիայում, Յութերորդի մոտ կատարված
յերկաթուղարքին հանցափորձի մասին, վորը կատարել եր հոգե-
հովանդը, արկածախնդիրը, պրովոկատորը: Այն ժամանակ վոչ
միայն Գերմանիայում, այլ նաև ուրիշ յերկիրներում շարժ-
ներով տարածում եյին այն պնդումը, թե այդ՝ գերմանական
կոմկուսակցության ձեռքի դորձն ե, թե այդ կոմունիստների
կատարած տեսորդիստական ակտ է: Հետո պարզվեց, վոր այդ՝
հոգեհովանդ և արկածախնդիր Մատուցվան ե կատարել: Նա
բանտարկվեց և դատավարվում եց:

Յես կհիշեցնեմ մի ուրիշ որինակ՝ Փրանսական պրեզիդեն-
տի սպանությունը Գորգուլովի կողմից: Այն ժամանակ նույն-
պես բոլոր յերկիրներում դրում եյին, վոր այտեղ կոմունիստ-
ների մասն և յերեւում: Գորգուլովը վորակես կոմունիստ, խոր-
հըրդային ագենտ եր ներկայացվում: Իսկ ի՞նչ դուրս յեկալ:
Պարզվեց, վոր այդ մահափորձը կատարելու են սպասակ-
ումիարդիսականները, իսկ Գորգուլովը յեղել ե պրովոկատոր, վո-
րը ցանկացել ե հասնել Սորհրդային Միության և Ֆրանսիայի
հարաբերությունների խզմանը:

Յես կհիշեցնեմ նաև Սոֆիայի մայր յեկեցու պայմենման
հանցափորձը: Այդ հանցափորձը Բուլղարիայի կոմկուսակցու-
թյունը չեր կազմակերպել, բայց դրա համար կոմկուսակցու-
թյանը հալածանների յենթարկեցին: Ֆաշիստական բանդաները
յերկու հազար բանվորներ, գյուղացիներ և ինտելիգենտներ գա-
ղանաբար սպանեցին այն պատրիակում, վոր մայր յեկեցին
պայմենեցրել են կոմունիստները: Սոֆիայի մայր յեկեցին պայ-
մենելու այդ պրովոկացիան կարմակերպել եր բուլղարական
գոստիկանությունը: Դեռևս 1920 թվին, յերկաթուղարքիների
դործադուլի ժամանակ, Սոֆիայի վոստիկանության պետ
Պրուտիլինը ինքն եր կազմակերպել ոմբաձիղների հանցափորձը՝
մորակես բուլղարական բանվորներին ալրովուկացիայի յենթարկե-
լու միջոց:

ՆԱԽԱԳԱՆ. — (Ընդհատում և Գիմիտրովին) Այդ դատավա-
րությանը չի վերաբերում:

ԴԻՄԻՏՐՈՎ. — Վոտսայիկանական պաշտոնյա Գելերն այսուեղ
խոսում եր Հրկիզումների կոմունիստական պրոպագանդայի մա-
սին և այլն: Յես նրան հարց ավի, հայտնի չե՞ն արդյոք նրան
դեպքեր, յերբ ձեռնարկատերների կողմից կատարված հրկիզում-
ները հետո վերագրվել են կոմունիստներին: «Ֆյուլիշեր Բեռ-
բախտեր»-ի հոկտեմբերի 5-ի համարում դրված է, վոր շտետի-
նյան վոստիկանությունը . . .

ՆԱԽԱԳԱՆ. — Այդ հոգվածը դատավարությանը չի ներկա-
յացված:

(Գիմիտրովը փորձում է շարունակել):

ՆԱԽԱԳԱՆ. — Դուք չհամարում կերպ այդ մասին այսուեղ խո-
սել, քանի վոր այդ մասին դատավարության ժամանակ չի հի-
շատակվել:

ԴԻՄԻՏՐՈՎ. — Մի ամբողջ շարք հրդեհներ . . .

(Նախագահը նորից ե ընդհատում Գիմիտրովին):

ԴԻՄԻՏՐՈՎ. — Այդ հետաքննության առարկա յեղակ, վո-
րովհետեւ մի ամբողջ շարք հրկիզումներ այստեղ համարում եյին
վորպես կոմունիստների հանցանք: Հետո սպարզեց, վոր այդ
ձեռնարկատերներն են կատարել «աշխատանք արամագրելու նպա-
տակով»: Յես ելի մի մոմենտ կհիշեցնեմ՝ փաստաթղթերի կեղ-
ծումը: Մեծ քանակությամբ կեղծագրեր կան, վորոնք ոգտա-
գործվել են բանվոր զասակարգի գեմ: Այդպիսի գեղքերը բաղ-
մաթիվ են: Յես կհիշեցնեմ թեեկուզ, այսպես կոչված, «Զինովի-
յի նամակը»: Նա կեղծված եր. այդ կեղծագրին անդիմական
պահպանողականներն ողոտագործեցին բանվոր զասակարգի գեմ:

ՆԱԽԱԳԱՆ. — Այդ դատավանության սահմաններից գուրս և
դադիւ:

ԴԻՄԻՏՐՈՎ. — Այստեղ պնդվում եր, վոր ոայխստագի հրդե-
հը սկեսք և զինված սպասամբության աղդանշան ծառայեր: Այդ
փորձում եյին հիմնալորել հետևյալ ձեռվ.

Գյորինը այտեղ, զատարանում ասաց, վոր այն մոմեն-
տին, յերբ Հիտլերն իշխանության դրուխ անցավ, Գերմանիայի
կոմկուսակցությունը ստիպված եր հրահրել իր մասաների
տրամադրությունը և վորեւ բան ձեռնարկել: Նա ասաց. «Կո-
մունիստաններն սպարզած եյին վորեւ բան ձեռնարկել—այժմ կամ
յերբեք»: Նա ասաց, վոր կոմունիստական կուսակցությունն ար-



դեն մի շարք տարիներ նացիոնալ-սոցիալիզմի դեմ պայքարելու յեր կոչում և վոր Գերմանիայի կոմկուսակցության համար՝ նացիոնալ-սոցիալիզմի կողմէից իշխանությունը կերպնելու մոմենտին ուրիշ յելք չեր մնացել, քան հանդես դալ—այժմ կամ յերբեք: Գերազույն զատավազը փորձում եր այդ իսկ թեղիսը ձեակերպել ավելի ճշորոշ և ե՛լ ավելի «խելացի»:

ՆԱԽԱԳԱՀ. —Յես թույլ չեմ տա, վոր գուք վիրավորեք դեռագույն զատավազին:

ԳԻՄԻԾՐՈՎ. —Այն, ինչ վոր Գյորինդը վորպես բարձրագույն մեղադրող պնդեց, այստեղ զարգացնում եր գերազույն զատավազը: Գերազույն զատավազ դր Վերներն ասաց. «Կոմկուսակցությունն այնպիսի դրության մէջ եր գտնվում, վոր նա կամ պետք ե առանց մարտի զիջեր, կամ ընդուներ մարտը, թեկուզ և առանց մինչեւ վերջը հասցրած նախապատրաստման: Այդ միակ շանսն եր, վորը մնում եր տվյալ պարագաներում կոմկուսակցության համար: Կամ առանց պայքարի հրաժարվել իր նպատակից, կամ զիմել դեպի հուսահատության վորոշ ակտ, զիմել բախտախղի—այդ դեռ վորոշ պարագաներում կարող կլիներ դրությունը փրկել: Գործը կարող եր նաև ձախողվել, բայց այն ժամանակ ել դրությունը ավելի վատ չեր լինի, քան յեթե կոմկուսակցությունն առանց կովի նահանջերը: Առաջադրվող այս թեղիսը, վոր կոմկուսակցության և վերալրվում, կոմունիստական թեղիս չե: Այդպիսի յենթագրությունը ցույց ե տալիս, վոր Գերմանիայի կոմկուսակցության թշնամիները այդ կուսակցություններ վատ են ճանաչում: Ով ցանկանում ե ճիշտ պայքարել իր հակառակորդի դեմ, նա պետք ե այդ հակառակորդին լավ ճանաչի: Կուսակցությունն արգելելը, մասսայական կազմակերպություններ ցրելը, լեզալությունը կորցնելը—այդ բոլորն անշուշտ ծանր հարվածներ են հեղափոխական շարժման համար: Բայց այդ բոլորովին չի նշանակում, վոր դրանով ամեն ինչ կորած ե:

1933 թ. գետրվարին կոմունիստական կուսակցությունն արգելման սպառնալիքի տակ եր; Կոմունիստական մամուլն արգելված եր, սպառվում եր կոմունիստական կուսակցության արգելվումը: Գերմանական կոմկուսակցությունն սպառում եր դրան: Այդ մասին խոսվում եր թուոցիկներում, թերթերում: Գերմանական կոմկուսակցությունը շատ լավ դիտեր, վոր շատ յերկրություններն արգելված են, բայց, չնայած դրան, նրանք շարունակում են իրենց աշխատանքն ու պայքարը:

Պոմկուսակցություններն արգելված են լեհաստանում, Բուլղարիայում, Իտալիայում և մի քանի այլ յերկիրներում:

Յես այդ մասին կարող եմ խոսել բուլղարական կոմկուսակցության փորձի հիման վրա: 1923 թ. ազգային բուլղարական կոմկուսակցությունն արգելվեց, բայց նու աշխատում եր, թեպետք այդ բաղմաթիվ գոհեր եր խորում նրանից, նու ավելի ուժեղացամի, քան մինչեւ 1923 թիվն եր: Այդ հասկանում և քննադրատորեն մտածող յուրաքանչյուր մարդ:

Գերմանական կոմկուսակցությունը, նույնիսկ անեգալ լինելով հանդերձ, համապատասխան սիտուացիայի գոյության դեպքում կարող ե հեղափոխություն կատարել: Այդ ցույց ե տակաւությունն անլեզալ եր, նա յենթարկվում եր արյունոտ հայրածանքների, բայց հետո բանվոր զատակարգը կոմկուսակցության գլխավորությամբ իշխանությունն իր ձեռքը վերցրեց: Գերմանական կոմկուսակցության զեկավարները չեյին կարող այնպես դատել, վոր այժմ ամեն ինչ կորած ե և վոր հարցը դրված ե՝ կամ—կամ, այն ե՝ կամ ապատամբություն, կամ կործանում: Կոմկուսակցության զեկավարությունն այդպիսի տըխմար միտք չեր կարող ունենալ: Գերմանական կոմկուսակցությունը ձշուրու կիտեր, վոր անլեզալ աշխատանքը սկազմական ուրիշի գոհեր իւլի և անձնազոհություն ու համարձակություն և պահանջում, բայց նա վիտեր նույնպես, վոր իր հեղափոխական ուժերն ամրանում են և վոր ինքն ընդունակ կլինի իրականացնել իր առաջ կանգնած ինտիբոները: Այդ պատճառով միանգամայն բացալվում ե, վոր իրը թե գերմանական կոմկուսակցությունն այդ շրջանում ցանկանում եր բախտախղի զիմել: Կոմունիստները, բարեբախտաբար, այնպան կարնաւալես չեն, ինչպես նրանց հակառակորդները, և նրանի իրենց գլուխը չեն կորցնում նաև ամենադժվար կացությունների պայմաններում:

Դրան պետք ե ավելացնել, վոր գերմանական կոմկուսակցությունը և ուրիշ կոմկուսակցություններ կոմունիստական ինտերնացիոնալի սեկցիաներն են: Ի՞նչ ե կոմունիստական ինտերնացիոնալը: Յես թույլ եմ տալիս ինձ մեջբերում անել կոմունիստական ինտերնացիոնալի կանոնադրությունից:

Յես այստեղ հրապարակում եմ կանոնադրության առաջին պարագրաՓը.

«Կոմունիստական ինտերնացիոնալը—Բանվորների միջազգային ընկերությունը համբխանում է առանձին յերկիրների կոմունիստական կուսակցությունների միավորում, համաշխարհային միասնական կոմունիստական կուսակցություն։ Հանդիսանալով պրոլետարիատի համաշխարհային հեղափոխական շարժման առաջնորդն ու կազմակերպիչը, կոմունիզմի սկզբունքների և նպատակների կրողը՝ Կոմունիստական ինտերնացիոնալը պայքարում է բանվոր դասակարգի մեծամասնությունը և չբավոր գյուղացիության լայն խավերը նվաճելու համար, պրոլետարիատի համաշխարհային դիկտատորան հաստատելու համար, իորերդային սոցիալիստական հանրապետությունների համաշխարհային միություն ստեղծելու համար, դասակարգերի լիակատար վոչնչացման և սոցիալիզմի—կոմունիստական հասարակության այդ առաջին աստիճանի իրականացման համար։»

Կոմունիստական ինտերնացիոնալի համաշխարհային՝ միլիոնավոր անդամներ ունեցող այդ կուսակցության մեջ Խորհրդային Միության կոմիկուսակցությունն ամենաուժեղ կուսակցություններից է։ Նա աշխարհի մեծագույն պետության՝ Խորհրդային Միության կառավարող կոմիսարներուն և կոմիսարների գործադրությունների համաշխարհային կոմունիստական կուսակցությունը—քաղաքական սփոռությամբ կշռադատում է քոլոր յերկիրների կոմունիստական կուսակցությունների ղեկավարության հետ միասին։

Կոմունիստական ինտերնացիոնալը, վորի առաջ անմիջականորեն սրբառականամատու յեն քոլոր սեկցիաները, դավադիմերի կաղմակերպություն չե, այլ համաշխարհային կուսակցություն։ Այդպիսի համաշխարհային կուսակցությունը ապատամբության ու հեղափոխության հետ խաղ չի անում։ Այդպիսի համաշխարհային կուսակցությունը չի կարող իր միլիոնավոր կողմանակիցներին սպազունապես առել մի քանի, իսկ մինույն ժամանակ գաղտնի կատարել հակառակը։ Այդպիսի կուսակցությունը, իմամենաբարի դր Զակ, կրնակի հաշվապահություն չդիտի։

Դր. ԶԱԿ.—Լավ, շարունակեցեք ձեր կոմունիստական պրոպագանդան։

ԴԻՄԻՏՐՈՎ. —Այդպիսի կուսակցությունը, յերբ նա դիմում է պրոլետարիատի միլիոնավոր մասսաներին, յերբ նա ընդունում է իր վորոշումները տակտիկայի ու մերձավորագույն խնդիրների մասին, կատարում է այդ լրջորեն, իր պատասխանատվության մեջ գիտակցությամբ։ Բերում եմ այսաեղ կիդա-ի ԽII պլե-

նումի վորոշումները։ Քանի վոր այդ վորոշումներից այստեղ՝ գատարանում մեջբերում արվեց, յստ իրավունք ունեմ հրապարակել դրանք։

Այդ վորոշումների համաձայն, դերմանական կամկուսակցության հիմնական խնդիրը հետևյալն եր։ «Աշխատավորների միլիոնավոր մասսաները մորիլիզացիայի յենթարկել նրանց կենսական շահերի պաշտպանության համար, մոնոպոլիստական կապիտալի կողմից նրանց կողոպտելու դեմ, Փաշիզի դեմ, արտակարգ դեկրետների դեմ, նայելուալվոմի և շովինիզմի դեմ և տնտեսական ու քաղաքական գործադրություններ ծալալելու միջոցով, պրոլետարական ինտերնացիոնալիզմի համար պայքար մղելու միջոցով, ցուցեցի միջոցով մասսաներին տանել դեպի ընդհանուր քաղաքական դործադրությը, սոցիալ-դեմոկրատական հիմնական մասսաների նվաճում, պրոֆմիութենական աշխատանքի թուլությունների վճռական հաղթահարում։ Գլխավոր լոգունդը, վոր գերմանական կոմունիստական կուսակցությունը պետք ե հակադրի Փաշիստական դիկտատուրայի («յերրորդ կայսրություն») լոգունդին, հավատարապես նաև սոցիալ-դեմոկրատական կուսակցության («յերկրորդ հանրապետություն») լոգունդին, այդ բանվորացյացիական հանրապետության լոգունդն ե, այսինքն՝ խորհրդային սոցիալիստական Գերմանիայի, վորն առաջույն նաև Ավստրիայի և գերմանական այլ մարզերի ժողովրդի կամակուր միացման հնարավորությունը»։

Մասսայական աշխատանք, մասսայական պայքար, մասսայական դիմադրություն, միասնական նակատ, վո՛չ մի արկածակիրություն։ Սրանք են կոմունիստական տակտիկայի ալֆան ու ոմեգան (ակիզմը ու վերջը)։

Ինձ մոտ գտնվել է կոմիներնի Գործկոմի կոչը։ Յես կարծում եմ, վոր լրանից նույնակես կարելի յե մեջբերում անել։ Այդ կոչի մեջ հատկապես կարեռ են յերկու կետեր։ Այսպես, դրա մեջ խոսվում է Գերմանիայում կատարվող դեպքերի կապակցությամբ տարբեր յերկիրներում տեղի ունեցող ցուցերի մասին։ Դրա մեջ խոսվում է՝ նայելուալ-սոցիալիստական տեսություն պայքարելու գործում կոմիուսակցությունների առաջ գրված խնդիրների մասին, ինչպես նաև բանվոր դասակարգի կաղմակերպությունների և մամուլի պաշտպանության մասին։ Այդ կոչի մեջ ի միջի այլոց առվում ե.

«Կոմունիստական և սոցիալ-դեմոկրատական բանվորների

պայքարի միասնական ճակատ կազմելու ճանապարհին ընկած դրւ-
խավոր արգելքը յեղել և և մնում է բուրժուազիայի հետ հա-
մադրժակցելու քաղաքականությունը, վոր վաշում են սոցիալ-
գեմոլոգաստական կուսակցությունները, վորոնք միջազգային
պրոլետարիատին այժմ գրել են դասակարգային թշնամու հար-
վածների տակ: Բուրժուազիայի հետ համագործակցելու այդ քա-
ղաքականությունը, վորը հայտնի յե այսպես կոչված «փոքրա-
գույն չարչիթ» քաղաքականություն անվան տակ, իրականում
Գերմանիան հասցրեց Փաշվաստական ռեսակցիայի հաղթանակին:

Կոմունիստական ինտերնացիոնալն ու բոլոր յերկիրների կոմունիստական կուսակցությունները շատ անդամ են հայտարարել իրենց պատրաստակամության մասին՝ սոցիալ-դեմոկրատական բանվորների հետ միասներ պայքարելու կապիտալի հարձակման, քաղաքական ռեակցիյաի և պատերազմի վտանգի դեմ՝ կոմունիստական կուսակցությունները, հակառակ բանվորական մասսաների միասնական ճակատը ախտեամատիկորեն վիժեցնող սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների առաջնորդների՝ կոմունիստական, սոցիալ-դեմոկրատական և անկուսակցական բանվորների միասներ պայքարի կազմակերպիչները յեղան:

Դեռևս անցյալ տարբիք հուլիսի 20-ին՝ պրուսական սոցիալ-դեմոկրատական կառավարությունը Փոն-Պապէնի կողմից ջախ-ջախվելուց հետո՝ դերմանական կոմիտասակցությունը՝ դիմեց Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությանն ու Պրոֆմիությունների համագերմանական միավորմանը՝ Փաշիզմի գերմանիայի միատեղ գործադուլ կազմակերպելու առաջարկով։ Բայց Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունն ու Պրոֆմիությունների համագերմանական միավորումը, ամբողջ Ա Խնտերնացիոնալի հավանությամբ՝ միատեղ գործադուլ կաղ-մակերպելու մասին յեղած առաջարկը վորակեցին վորածա պրո-վոկացիա։ Գերմանիայի կոմունիստական կուսակցությունը միա-տեղ գործողությունների մասին արած իր առաջարկությունը վերակրկնեց Հիտլերի՝ իշխանության գլուխ անցնելու մոմենտին, Հրավիրելով սոցիալ-դեմոկրատական կուսակցության Կենտրոնա-կան կոմիտեյին և Պրոֆմիությունների համագերմանական միա-վորման վարչությանը միատեղ հակահարված կազմակերպելու ընդդեմ Փաշիզմի, բայց այս անդամ ևս Գերմանիայի կոմիտաս-կցությունը մերժում ստացավ։ Յեվ ավելին, յերբ անցյալ տարվա նոյեմբերին՝ Բեռլինի արանսպառանիկները միահամուռ կերպով

դորձաղութ արին աշխատավարձն իջեցնելու դեմ, սոցիալ-պեմո-կրատիան պայքարի միասնական ճակատը վիժեցրեց : Միջազ-գային բանվորական շարժման ոլրակտիկան լիքն և այդպիսի որի-նակներուի :

